



ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ
ՀԱՅ ԲԱՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ՖԱԿՈՒԼՏԵՏ

Ա Ր Ձ Ա Ն Ա Գ Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն № 3

**ԵՊՀ-Ի ՀԱՅ ԲԱՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ՖԱԿՈՒԼՏԵՏԻ ԳԻՏԽՈՐՀՐԴԻ՝
2017 Թ. ՆՈՅԵՄԲԵՐԻ 15-ԻՆ ԿԱՅԱՑԱԾ ՆԻՍՏԻ**

Օրակարգում՝

1. Հայ գրականության ամբիոնի տարեկան հաշվետվությունը:
2. Հեռակա ուսուցմամբ ասպիրանտների ատեստավորում:
3. «Աբեղյանական ընթերցումների» հերթական գիտանատաշրջանի նախապատրաստական աշխատանքների ընթացքը (զեկուցող՝ ամբիոնի վարիչ Ա. Աբաջյան):
4. Ուսանողների՝ դասերի հաճախումների հետ կապված հարցերի քննարկում:
5. Ընթացիկ հարցեր:

Հայ բանասիրության ֆակուլտետի դեկան պրոֆ. Ա. Ավագյանն իր խոսքի սկզբում գիտխորհրդի մասնակիցներին տեղեկացրեց, որ խորհրդի 24 անդամներից նիստին մասնակցում է 20-ը, և ապահովված է անհրաժեշտ քվորումը: Դեկանն այնուհետև ծանոթացրեց նիստի օրակարգի հարցերին, որոնք միաձայն ընդունվեցին բաց քվեարկությամբ:

1-ին հարցի առիթով պրոֆ. Ա. Ավագյանը ձայնը տվեց պրոֆ. Ս. Մուրադյանին, որը հանդես եկավ ակադ. Հր. Թամրազյանի անվան հայ գրականության ամբիոնի 2016-2017 ուստարվա ընթացքում կատարված հաշվետվությամբ: Իր խոսքում նա մասնավորապես ասաց հետևյալը.

- Ակադ. Հր. Թամրազյանի անվան հայ գրականության պատմության ամբիոնն ունի 11 հաստիք, սակայն լրիվ դրույքաչափով աշխատում են միայն ամբիոնի վարիչ պրոֆ. Ս. Մուրադյանը և պրոֆեսորներ Վ. Սաֆարյանն ու Ալ. Մակարյանը: Դասաժամերի կրճատման հետևանքով դոց., դոց. Ռ. Էլոյանը, Վ. Եղիազարյանը, Ն. Վարդանյանը, Հ. Համբարձումյանն անցել են 0,75 դրույքի, իսկ Բ. Գ. Դ., դոց. Ս. Մխիթարյանն ու դոց. Վ. Ավագյանը՝ կես դրույքի: Կես դրույքով են աշխատում նաև նաև համատեղող դոցենտներ Ս. Սրապիոնյանն ու Ա. Գալստյանը, իսկ դոց. Խ. Վարդանյանը պարզապես կրճատվել է:

Չնայած այս իրավիճակին՝ 2016 - 2017 ուստարում ամբիոնը շարունակել է իր գիտամանկավարժական գործունեությունը թե՛ հայ հին և միջնադարյան, թե՛ հայ նոր գրականության ուղղություններով, և գիտական աշխատանքները ներկայացնում են հետևյալ պատկերը:

Ամբիոնի աշխատակիցները մասնակցել են ինչպես Հայաստանում, այնպես էլ արտերկրում՝ Ռուսաստանում, ԱՄՆ-ում և Իտալիայում, կազմակերպված միջազգային գիտաժողովների ու հրապարակային բանախոսությունների, հանդես եկել զեկուցումներով ու գիտական հրապարակումներով: Այսպես, Սփյուռքի նախարարության և Համազգային կրթական և մշակութային միություն հետ ամբիոնը կազմակերպել է Ավետիս Ահարոնյանի, իսկ ՀՀ ԳԱԱ Ս. Աբեղյանի անվան գրականության ինստիտուտի հետ միասին՝ Նար-Դոսի ծննդյան 150-ամյակներին նվիրված համատեղ գիտաժողովները, որոնցում զեկուցումներով հանդես են եկել Ս. Մուրադյանը, Վ. Սաֆարյանը և Ս. Սրապիոնյանը, նախորդ երկուսը զեկուցել են նաև 2017 թ. ապրիլին «Չարենցյան ընթերցումների» 10-րդ նստաշրջանում:

Դոց. Ն. Վարդանյանը մասնակցել է հեքիաթագիտական, իսկ դոց. Հ. Համբարձումյանը՝ Իտալիայում և Ռուսաստանում էպոսագիտությանը նվիրված միջազգային գիտաժողովներին:

Ամբիոնի գործունեության կարևոր ոլորտներից մեկն էլ համալսարանական գիտությունը հանրության մեջ տարածելն է: Ամերիկահայերի հրավերով և համալսարանի գործուղմամբ 2016-ի նոյեմբերին պրոֆ. Ս. Մուրադյանը Գլենդելի «Ապրիլ» գրատանը և Փասադենայի եկեղեցու մեծ սրահում հանդես է եկել հայ գրականության մասին հրապարակային բանախոսություններով: Նա և ամբիոնի մյուս անդամները՝ Վ. Սաֆարյանը, Ս. Մխիթարյա-

նը, Վ. Ավագյանը, ԵՊՀ նախահամալսարանական կրթության բաժնի նախաձեռնությամբ հաճախ են լինում Երևանի և հանրապետության մարզերի ավագ կամ հանրակրթական դպրոցներում, աշակերտների ընտրությամբ կարդում են դասախոսություններ և նրանց կողմնորոշում դեպի համալսարան: Կարելի է առանձնացնել հատկապես Ս. Մուրադյանի և Վ. Սաֆարյանի բովանդակալից ելույթները Գյումրու «Ֆոտոն» վարժարանում և Մուրադյանի ելույթը Գորիսի ավագ դպրոցում:

Փոքր չէ նաև ամբիոնի աշխատակիցների գիտական հրապարակումների թիվը:

Պրոֆ. Ս. Մուրադյանը 2016 թ. տպագրել է «Հովհաննես Շիրազ» մենագրության Բ մասը, իսկ 2017-ին՝ Հ. Շիրազի «Հուշարձան հայրիկիս»՝ բանաստեղծություններով հյուսված պոեմը՝ 240 էջ՝ իր առաջաբանով, խմբագրումով և ծանոթագրություններով: Հրատարակել է նաև «Ավետիս Ահարոնյանը Հարություն Մուրխաթյանի 1926 թ. կազմած «Հայ գրականություն» դասագրքում» հոդվածը «Ավետիս Ահարոնյան-150» ժողովածուում և «Եղիշե Չարենց – 120» հոդվածը «Պատմաբանասիրական հանդեսի» 2-րդ համարում: Շուտով լույս կտեսնի նաև «Ինքնակերպավորված Եղիշե Չարենցը «Երկիր Նաիրի» վեպում և Կարսի անկումը նրա հայացքով» ծավալուն հոդվածը «Չարենցյան ընթերցումների» 10-րդ պրակում: Այժմ աշխատում է «Հայ նոր գրականության պատմություն» բուհական դասագրքի վրա և շարադրել է 1-ին հատորից 230 էջ:

Արդյունավետ է եղել և պրոֆ. Վ. Սաֆարյանի գիտական գործունեությունը: Նա հրատարակել է իր տեսակի մեջ եզակի, ուսանողության համար խիստ անհրաժեշտ և բավական հաջողված «Հայ միջնադարյան գրականություն» բուհական ուսումնական ձեռնարկը: «ՎԷՄ» համահայկական հանդեսի 2016 թ. 2/54/ համարում տպագրել է «Հրանտ Մաթևոսյանի պատմափիլիսոփայությունը», իսկ «Էջմիածին» հանդեսի 2-րդ համարում՝ «Հայկական ինքնության խնդիրն ըստ Խորենացու և Թումանյանի» հոդվածները:

Կարևոր են նաև պրոֆ. Ալ. Մակարյանի՝ 2016 թվականի 3 ծավալուն հրապարակումները՝ «Հակոբ Պարոնյանի «Մեծապատիվ մուրացկանները» (մի քանի դիտարկումներ)» /«Հայագիտական հանդես», 2(32)/, «Զապել Եսայանի «Միլիտարի պարտեզները» /«ՎԷՄ», 1 (53)/ և «Ռափայել Պատկանյանի վիպաշխարհը» /«ՎԷՄ», 3 (55)/: Պրոֆ. Ալ. Մակարյանը

պատրաստել է նաև մի հետաքրքիր մենագրություն՝ «Կրկին Պարոնյանի հետ» խորագրով, որը շուտով կներկայացնի ամբիոնի քննարկմանը:

Բ. գ. դ. դոց., Ս. Մխիթարյանը, որը վերջերս է մասնակցել Գորիսի համալսարանում գիտական նստաշրջանին, հրատարակել է «Ոսկան Երևանցին որպես աշխարհական գրքերի հրատարակիչ» հոդվածը («Էջմիածին», 2016, թիվ 10) և գրախոսություն «Հայագիտական հանդեսի» թիվ 3-ում՝ Ս. Մուրադյանի «<Հովհաննես Շիրազ. Բանաստեղծը, մարդը>> Բ գրքի մասին:

Դոց. Ռ. Էլոյանը, «Երվանդ Օսյան. արցունքոտ ծիծաղի մեծ վարպետը» մենագրությունից բացի, հրատարակել է նաև «Բաֆֆի. չյուրացրած դասեր» (“Актуальные вызовы современной науки”, Выпуск 2, часть 5, II, стр. 234-238, Украина), «Հայ ազգային-ազատագրական պայքարի՝ Բաֆֆու գաղափարաբանության ուսուցման մի քանի հարցեր» («Մանկավարժական միտք» 1-2 /60-61/, 2016) հոդվածները:

Բազմազբաղ դոց. Ս. Սրապիոնյանը կարողացել է մեկ հոդված հրատարակել «Ավետիս Ահարոնյան – 150» ժողովածուում՝ «Ավետիս Ահարոնյան – մարդը, գրողը, քաղաքացին» խորագրով:

Դոց. Հ. Համբարձումյանը հեղինակ է 4 հրապարակման, որոնցից երկուսը՝ Իտալիայում և Ռուսաստանում. Ա. ««Մասնա ծոեր» էպոսի ուսումնասիրության նոր մեթոդների դասավանդումը բուհում» («Մանկավարժական միտք», թիվ 5, Եր., 2016), Բ. “Re-readings of the epic Sasna Tsrer (Daredevils of Sassoun) in contemporary Armenian prose: from epic to novel” (««Մասնա ծոեր» էպոսի վերընթերցումը հայ արդի արձակում. էպոսից վեպ»), (LEA - Lingue e Letterature d'Oriente e d'Occidente, 2016 , թիվ 5, Իտալիա), Գ. Some features of translation of the epic: English translations of the Armenian national epic “David of Sassoun” («էպոսի թարգմանության որոշ առանձնահատկություններ. հայկական ազգային «Մասունցի Դավիթ» էպոսի անգլերեն թարգմանությունները»),(Ռուսաստան, “Вестник Северо-Восточного федерального университета имени М. К. Аммосова”: Серия Эпосоведение. № 2 (06) 2017, էջ 27-36, Ռուսաստան, Դ, «Մասնա ծոեր» էպոսի և ժողովրդական հեքիաթների դե-պառավներն ու վայրի բնության տիրակալ Ավդալը» /«Ոսկե դիվան» հեքիաթագիտական հանդես, N 5, Երևան, 2017, 3-12/:

Երեք հրապարակումներով հանդես է եկել դոց. Ն. Վարդանյանը՝ Ա. «Մոկս. Հայոց բանահյուսական մշակույթը» (գրախոսություն, «Պատմաբանասիրական հանդես», 2017, թիվ 1), Բ. «Ծիսապաշտամունքային մոտիվները փեսայի շեմին կատարվող հարսանեկան ծիսերգերում» («Կաճառ», Գիտական տարեգիրք, 2017), Գ. «Ժողովրդական հեքիաթի դասավանդման մեթոդիկական բուհում» («Մանկավարժական միտք», Եր., 2016 , 1-2 (60-61):

Երկու հրապարակում ունի դոց. Վ. Եղիազարյանը՝ «Թուխմանուկյան արձագանքները հայ միջնադարյան ժողովրդական երգերում», «Քրիստոնյա Հայաստան», Ապրիլ Ա, 2016, Բ., «Մանուկ-կտրիճն ուշ միջնադարյան հայ բանաստեղծության մեջ», Մայիս Ա, «Էջմիածին», 2016:

Դոց. Վ. Ավագյանը երեք հրապարակում ունի. «Մի լրացում սայաթնովագիտության մեջ» («Հայագիտության հարցեր»), «Բաֆֆին Արշակ Չոպանյանի գնահատությամբ», «Ակունք», հանդես, 1 (13), Ե., 2016), «Գրիգոր Նարեկացին Հրանտ Թամրազյանի գնահատմամբ» («Ակունք», Իջևան, 2017, թիվ 1 /15/), «Ջուրը հայոց հավատալիքներում...» («Հայկազեան հայագիտական հանդես», Բեյրութ, 2016):

Ամփոփենք: Հաշվետու ժամանակաշրջանում ամբիոնի աշխատակիցները, զեկուցումները չհաշված, հրատարակել են 2 մենագրություն, ուսումնական 1 ձեռնարկ, գեղարվեստական 1 գիրք՝ առաջաբանով և ծանոթագրություններով, և 25 հոդված:

Գիտխորհրդի անդամները ակադ. Հրանտ Թամրազյանի անվան հայ գրականության պատմության ամբիոնի՝ հաշվետու ժամանակաշրջանում կատարված աշխատանքները գնահատեցին բավարար:

Գիտխորհրդի նախագահ Ա. Ավագյանը, անցնելով **օրակարգի 2-րդ**՝ հեռակա ուսուցմամբ ասպիրանտների ատեստավորմանը, ներս հրավիրեց ասպիրանտներին, որոնք ներկայացրին իրենց հաշվետվությունները:

ԼՄԵՑԻՆ - Հայ բանասիրության ֆակուլտետի հայոց լեզվի ամբիոնի հեռակա ասպիրանտ **Լիանա Վարդանի Ալեքսանյանի** ատեստավորման հարցը:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ - Պրոֆ., պրոֆ. Յու. Ավետիսյանը, դոց. Բ. Ներսիսյանը և ուրիշներ:

Նշվեց, որ Լ. Ալեքսանյանը 2013 թվականին ընդունվել է ասպիրանտուրա (հեռակա ուսուցում): Նրա ատենախոսության թեման է «Դատական խոսույթը հայերենում», ղեկավար՝ պրոֆ. Յու. Ավետիսյան:

Լ. Ալեքսանյանը հանձնել է փիլիսոփայության քննությունը: Ավարտել է մասնագիտական պատրաստվածության կրթամասի բոլոր դասընթացները: Ուսումնասիրել է լեզվաբանական և իրավաբանական մեծածավալ գրականություն, ավարտել է աշխատանքի գլուխների շարադրանքը: Տպագրության է պատրաստել երեք գիտական հոդված:

ՈՐՈՇԵՑԻՆ – Ատեստավորել հայոց լեզվի ամբիոնի ասպիրանտ **Լ. Ալեքսանյանին**:

ԼՍԵՑԻՆ – Հայոց լեզվի պատմության ամբիոնի հեռակա ասպիրանտ **Վանուհի Բաղմանյանի** ատեստավորման հարցը:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ – Պրոֆ., պրոֆ. Ա. Ավագյանը, Ա. Աբաջյանը և դոց. Ն. Դիլբարյանը:

Ատենախոսության թեման է՝ «Ն. Ադոնցի լեզվաբանական ժառանգությունը», ղեկավար՝ ք. գ. թ., դոց. Ն. Դիլբարյան: Վանուհի Բաղմանյանը մեկ տարվա ընթացքում մասնակցել է ԵՊՀ ՈԻԳԸ 70-ամյակին նվիրված 4-րդ միջազգային գիտաժողովին, ունի 5 տպագրված հոդված, 2-ը տպագրման ընթացքի մեջ են: Գարնանը (06.03.2017-03.06.2017) Erasmus+ ծրագրով գործուղվել է Բելգիա՝ Ն. Ադոնցի լեզվաբանական ժառանգության բացահայտման նպատակով: Երեք ամիսների ընթացքում գտել և թվայնացրել է Ն. Ադոնցի՝ Բելգիայում գտնվող գիտական աշխատությունները, բացել [Էլեկտրոնային էջ](#): Թեկնածուական ատենախոսությունը հանձնված է ամբիոն:

ՈՐՈՇԵՑԻՆ – Հաշվի առնելով **Վանուհի Բաղմանյանի** կատարած աշխատանքը մեկ տարվա ընթացքում՝ ատեստավորել նրան: Հաստատել ամբիոնի որոշումը:

ԼՍԵՑԻՆ.– Հայ նորագույն գրականության ամբիոնի երրորդ տարվա ասպիրանտ **Գոհար Հարությունյանի** հաշվետվությունը և ատեստավորման հարցը:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ. – Պրոֆ., պրոֆ. Վ. Գաբրիելյանը, Ա. Ավագյանը և դոց. Ս. Գրիգորյանը:

Գոհար Հարությունյանի թեկնածուական ատենախոսության թեման է՝ «Միմոն Միմոնյան. կյանքը և ստեղծագործությունը»:

Նա 2017թ. հոկտեմբերին մասնակցել է ԵՊՀ ՈւԳԸ միջազգային 4-րդ գիտաժողովին, հանդես է եկել զեկուցմամբ, որի ամբողջական տարբերակը լույս կտեսնի ժողովածուի առաջիկա համարում: Պատրաստվում է տպագրելու ևս երկու հոդված:

Մասնակցել է պարտադիր և կամընտրական մի շարք դասընթացների, հանձնել ստուգարքները, ուսումնասիրել է անհրաժեշտ ողջ գրականությունը,

ՈՐՈՇԵՑԻՆ. – Գոհար Հարությունյանին ատեստավորել:

ԼՍԵՑԻՆ.- Հայ նորագույն գրականության ամբիոնի երկրորդ տարվա ասպիրանտ **Թագուհի Ղազարյանի** հաշվետվությունը և ատեստավորման հարցը:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ. – Պրոֆ. պրոֆ. Ա. Ավագյանը, Վ. Գաբրիելյանը և դոց. Ս. Գրիգորյանը:

Թագուհի Ղազարյանի թեկնածուական ատենախոսության թեման է՝ «Եղիշե Չարենցի «Երկիր Նաիրի» վեպի ստեղծագործական պատմությունը և գործառնությունը»:

Նա 2017 թվականի հոկտեմբերի 26-ին մասնակցել է Մարտիրոս Սարյանի տուն-թանգարանում անցկացված միջազգային գիտաժողովին և հանդես էկել զեկուցմամբ, որն ամբողջությամբ լույս կտեսնի գիտաժողովն ամփոփող գրքում:

Մասնակցել է պարտադիր և կամընտրական մի շարք դասընթացների, հանձնել ստուգարքները, ուսումնասիրում է անհրաժեշտ գրականությունը:

ՈՐՈՇԵՑԻՆ. – Թագուհի Ղազարյանին ատեստավորել:

Օրակարգի **3-րդ հարցի՝** «Աբեղյանական ընթերցումների» հերթական գիտական նստաշրջանի նախապատրաստական աշխատանքների ընթացքի առիթով էլույթ ունեցավ հայոց լեզվի պատմության ամբիոնի վարիչ պրոֆ. Ա. Աբաջյանը: Վերջինս մասնավորապես նկատեց, որ գիտական հերթական նստաշրջանին ամբիոնի աշխատակիցները նախապատրաստվում են ջանադրությամբ, ավելին, մեծ պատասխանատվությամբ. արդեն պատրաստ են մի քանի զեկուցումներ, որոնք քննարկման փուլում են, և, բացի այդ, աշխատանքներին ընդգրկված են նաև մյուս ամբիոնների գիտնականները:

Օրակարգի **4-րդ հարցը** նվիրված էր ուսանողների՝ դասերի հաճախումների հետ կապված հարցերին: Այդ առիթով պրոֆ. Ա. Ավագյանը մասնավորապես նկատեց, որ ինչպես նախորդ նիստի ժամանակ է ասվել, այժմ էլ շեշտում է, որ դրանք, ցավոք սրտի, դարձել

են արատավոր երևույթներ: Հոկտեմբերից մինչ օրս 42-72 ժամ բացակա ունեցող ուսանողներն արդեն ստացել են գրավոր նկատողություններ, և ապա դիմելով գիտխորհրդի ուսանող անդամներին՝ ավելացրեց, որ ՊՆ՝ տարկետման իրավունքի դեմ ուղղված ուսանողների բողոքները, իր կարծիքով, չի կարելի կազմակերպել դասերի հաշվին. բողոքը ուսանողների իրավունքն է, բայց դա պետք է արտահայտել դասերից դուրս, քանի որ խիստ տուժում է առաջադիմությունը:

Պրոֆ. Ա. Ավագյանն ամբիոնի վարիչներին նորից հանձնարարեց ամենօրյա հսկողություն սահմանել ուսանողների հաճախումների կարգապահության վրա, բացահայտել պատճառները, որպեսզի դեկանատը գա համապատասխան եզրահանգումների ու ձեռնարկի միջոցներ:

Ընթացիկ հարցերում

ԼՍԵՑԻՆ - Հայ բանասիրության ֆակուլտետի 2000 թ. շրջանավարտ **Թամարա Վաչիկի Հարությունյանին** հայոց լեզվի ամբիոնում հայցորդ ձևակերպելու հարցը:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ - Պրոֆ., պրոֆ. Ա. Ավագյանը, Յու. Ավետիսյանը, Ա. Աբաջյանը, դոց. դոց. Լ. Թելյանը, Բ. Ներսիսյանը և ուրիշներ:

Նշվեց, որ Թամարա Հարությունյանը 1996 թ. ընդունվել և 2000-ին ավարտել է հայ բանասիրության ֆակուլտետի բակալավրիատը, 2000-2002 թթ. սովորել է նույն ֆակուլտետի մագիստրատուրայում: 2002 թվականից աշխատում է որպես հայոց լեզվի և գրականության ուսուցչուհի թիվ 81 միջնակարգ դպրոցում: Տպագրել է երկու հոդված:

ՈՐՈՇԵՑԻՆ - **Թամարա Վաչիկի Հարությունյանին** հայոց լեզվի ամբիոնում ձևակերպել հայցորդ՝ «Ժ. 02 .01 - Հայոց լեզու» մասնագիտությամբ:

ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ

ՊՐՈՖ. Ա. ԱՎԱԳՅԱՆ

ԳԻՏՔԱՐՏՈՒՂԱՐ

ՊՐՈՖ. ԱԼ. ՄԱԿԱՐՅԱՆ